

Հայ-ադրբեջանական կոնֆլիկտը կենդանարկի Մոսկվայում բացվող Ռուսաստանի ժողդասգամավորների 4-րդ համագումարում

Մոսկվա, 21 մայիս: Մեր հասուկ քղթակից ՀԱԿՈՐ ԱՄՍՏՐՅԱՆ

Այդ արդյունքին համագումարը հասավ միայն մի քանի անգամ քվեարկելուց հետո: Սկզբում պատգամավոր Սերգեյ Յուշենկովը առաջարկեց հայ-ադրբեջանական կոնֆլիկտի հարցը մտցնել օրակարգի մեջ եւ մեկ րոպե լռությամբ հարգել Հայաստանում եւ Ադրբեջանում զոհվածների հիշատակը: Պատգամավոր Շարադը իր ելույթում նշեց, որ այդ հարցի քննարկումը չի հանգեցնի հայ-ադրբեջանական հարաբերությունների սրմանը, այլ քննարկվելու է բանակի միջամտությունը սահմանամերձ գոտում: «Բանակն ամենուր ընդունվում է որպես ռուսական եւ եթե մենք մեր վերաբերմունքը չարտահայտենք, մեզ կըխայտառակենք»: Շարադի այս ելույթը ընդունվեց ծափահարություններով: Երբ առաջին անգամ Ելցինը հարցը դրեց քվեարկության, այն չանցավ. կողմ՝ 452, դեմ՝ 316, ձեռնպահ՝ 104: Այս հարցի առթիվ նորից ելույթ ունեցան պատգամավորներ Յուշենկովը եւ Իլովսկին: Ելցինն առաջարկեց նորից վերադառնալ այդ

հարցին (կողմ՝ 516, դեմ՝ 137, ձեռնպահ՝ 25), որն ընդունվեց: Այնուհետեւ պատգամավոր Ռեբրիկովն առաջարկեց անցկացնել անհատական քվեարկություն, վերաքվեարկելով հայ-ադրբեջանական կոնֆլիկտի քննարկման հարցը: Այն անցավ. կողմ՝ 534, դեմ՝ 192, ձեռնպահ՝ 98): Այնուհետեւ պատգամավոր Տարասովը մտավախություն հայտնեց, թե Ռուսաստանի համագումարը դրանով իսկ կլարի շրջանի իրադրությունը, Սակայն Շելով-Կովեդյանն իր ելույթում հաստատականորեն պնդեց, որ հարցի քննարկումը շատ կարևոր է եւ անհրաժեշտության դեպքում կարող է քննարկվել փակ նիստում: Վերջապես զանազան հարցերի մեջ այդ հարցը մտցնելու վերջին քվեարկումն անցավ ձայների մեծամասնությամբ. կողմ՝ 576, դեմ՝ 132, ձեռնպահ՝ 119: Բվեարկումից հետո պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին Հայաստանում եւ Ադրբեջանում զոհվածների հիշատակը: